ԸՆԴՀԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎՐԱՅ

Ապրիլի 10ի կէսօրին ադրբեջանական Ախուռա գիւղի կողմից ԳԱԶ 66 տիպի մեքենայով ադրբեջանցի շուրջ 10 միլիցիոներներ (ՕՄՕՆ) սկսել են կրակել անասնապահ Արմենակ Օհանեանի եւ նրա հօտի վրայ: Սատկել են երկու անասուն եւ վիրաւորուել մի քանիսը: Հովուին օգնութեան են հասել Հայաստանի խորհրդարանին ենթակայ յատուկ գնդերի մի քանի մարտիկներ: Հովուին յաջողուել է ձորով բարձրանալ յաջորդ հովուի մօտ: Այս վերջինը լուր է հասցրել գիւղ, որ անասունները կոտորում են եւ հերթապահները շրջափակուած են: Դրանից յետոյ յատուկ գնդի միւս մարտիկներն ու գիւղի բնակիչները շտապել են օգնութեան: Հրաձգութիւնը չի դադարել մինչեւ գիշեր, երբ տղաներին յաջողուել է ճեղքել պաշարման շղթան: Գիւղին օգնութեան են հասել նաեւ Արարատի եւ այլ շրջաններից: Բարեբախտաբար, վիրաւոր կամ զոհ չկայ:

Յաջորդ օրը լարուածութիւնը պահպանւում էր եւ երկու կողմերը մընում էին իրենց դիրքերի վրայ, սակայն հրաձգութիւն չկար:

Խաչիկ գիւղը Հայաստան-Նախիջեւան սահմանին վրայ ռազմավարական կարեւոր դիրք է գրաւում: Այն թերակզու նման մտել է Նախիջեւանի տարածքի մէջ:

Գիւղացիների կարծիքով -ադրբեջանցիները եթէ դիմացի լեռներում դիրքաւորուեն, ժողովուրդը պիտի չկարողանայ աշխատել կիրճերում եւ հարթավայրերում-: Գիւղը անյապաղ աջակցութեան կարիք ունի: Առաջին հերթին, սակայն, անհրաժեշտ է գիւղը դուրս բերել մեկուսացումից՝ ադրբեջանցի հրոսակների շրջափակումների վտանգից փրկելու համար: